

ողէտք է տօնել ու պատուել այդ հայ մեծ զրաց գէտին թիշտառակն ու զործը, ու ընտրեց՝ ներկայ ժղողներէն ինչպէս եւ բացակայ անձնաւորութիւններէ՝ կարմակերպիչ ժամանախումը մը, բազկացած մօտ երեսուն անձէ, որպէս զի ան սարքէ Փարուղի մէջ, այս զարնան վերջը կամ յառաջիկայ աշնան, մեծ հանդէս մը ի պատի Բաֆֆիի, կոչ ուղղէ Ֆրանսայի եւ այլ օտար հրկիրներու հայ զազութներուն որ նմանօրինակ հանդէսներ սարքնեն, եւ ջանայ նաեւ հրատարակել հատոր մը որ Բաֆֆիի նուիրուած յօդուածներու հաւաքածու մը պարունակէ:

Բաֆֆի հայ աղջի մեծագոյն զրագէտներէն մին եղաւ: Հայաշունչ սոմանթիկ հայ վէպը, զոր Խաչատուր Արուիկան հիմնեց, եւ զոր Շերենց սկսած էր արդէն ծաղկեցնել իր պատմական ողեւորիչ վէպերով, Բաֆֆի հասցուց իր զերազոյն բարձրութեան եւ զարձաւ մեր «արդային վիպասանը», «վիպասան» բառին թէ՝

Հին իմաստով (զիւցաղներգակ) եւ թէ՝ նոր նըշանակութեամբ, (Աւոլթը Սքոթի, Հիւկոյի, իօժէն Սիւի ողւով ու զնացքով՝ կեանքի պատկերահան եւ վէպի միջոցով որոշ զաղափարներու թերագրիչ ու տարածիչ): Ան իր որոշ շարք մը վէպերով ամենախոր ազգեցութիւն զործեց հայ ժողովուրդի հոգերանութեան՝ ու նոյն իսկ ձակատագրին՝ վրայ. ատկից զատ՝ ան մարդկային ինքնազրուշմ տիպարներ ստեղծող, կովկասեան, արեւելեան (ու մանաւանդ պարսկական) կեանքը տաղանդաւոր կերպով պատկերացնող համեզ վիպովի ընդարձակ զործ մը արտագրեց: Բովանդակ հայ ժողովուրդը պէտք է անշուշտ միանայ տօնախմբելու համար այդ հզօր մատենագիրը որ եղաւ մին մեր ազգային մշակոյթի մեծ հնոցներէն եւ կը մնայ միշտ վառ իրը անոր անչէջ ջահերէն մին:

## Ա ԶՊԱՆԵԱՆ

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՕ ՄՈՒՍՔՈՒՆԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՓՈԼ ՍՈՒՇՈՒՆԻ ՆԱՄԱԿԻ:

VICTOR HUGO, CHATEAUBRIAND ET LAMARTINE  
DANS LA LITTÉRATURE ARMÉNIENNE

ԳՐԲԻՆ ԱՌԹԻՒ

Բանասաւեղծ Փոլ Սուշոն, վերատեսուչ Փարիզի «Վիքթոր Հիւկօ Մուսէռն»ին, Հետեւեալ համակը ուղղած է Պ. Զապանեանին —

Սիրելի բարեկամ,

Զեր այս գիրքով ամենաքանիքին վկայուրին մը կը բերէք Վիքրոր Հիւկոյի նառագյրմանը, բանի որ լոյսի հայրենիքը, որ ձեր հայրենիքն է, անոր կ'ընծայէ այդպիսի զո-

վեստներ: Այդ գեղեցիկ հաւաքածուն պիտի տեղաւորեմ մեր մատենադարանին մէջ, ուր ան պիտի հաստատէ նաև քէ Մուսաները Արշակ Զապանեան բանասեղծը Ֆրանսայի մէջ դրին՝ որպէս զի «հինչուն արձագանգն» ըլլայ մեր մեծագոյն փառքերուն, Միսրալին եւ Վիքրոր Հիւկոյին:

Զեր վաղեմի բարեկամը Փոլ Սուշոն

## Գ. Բ Ի Պ Ա Կ

Արմենակ Սապրզեանի Անահիտի ներկայ թիւով Հրատարակուած «Յիշտառակներ կ. Պոլսէն» յօդուածին մէջ, Հետեւեալ քանի մը արպագրական վրեպակները սպրզած են, էջ 34, ա. սիւնակ, տող 41, զզացուած ուղղել՝ զզացած էջ 34, բ. սիւնակ, տող 26, իր խորհրդապահարար հայորդած, ուղղել՝ իրեն խորհրդապահարար հայորդուած: էջ 37, ա. սիւնակ,

տող 8 և 9, պալատին մէջ սենեկապաններուն մօտ, Սէփէր Էֆէնտին էր որ Արտաքին Գործոց նաև տող մը ինկած է՝ այս երկու տողերուն միջև, ուղղել՝ Պալատին մէջ, սենեկապաններուն մօտ, միակ Հայը որուն կը համուլիպէի երբեմն, Սէփէր Էֆէնտին էր, որ Արտաքին Գործոց նաև էջ 39, ա. սիւնակ, տող 12, բարոզմանը, ուղղել՝ բարզմանը: